

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹՈՐՈՍՅԱՆ ԶԱՎԱՀԻՐ ԶԱՆԻԲԵԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ 1918-1920 ԹԹ.
ԽՈՐՀՐԴԱԹՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ներսիսյան Ա. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ պատմական գիտությունների դոկտոր
Վիրաբյան Վ. Հ.
պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Սուքիասյան Հ. Կ.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մարտի 31-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. փետրվարի 27-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ պ. գ. թ., դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱՆՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԱՏԵՆԱՆՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ

ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՈՒՆԸ: Հայաստանի սահմանների ու դրանցում ներառված տարածքների հիմնախնդիրը մեր ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող հիմնախնդիրներից մեկն է, որը արդարացի լուծում պահանջելով չի կորցրել իր գիտական ու արդիական նշանակությունը: 1918-1920 թթ. ստորագրված Բաթումի և Սևրի պայմանագրերի, Թիֆլիսի և Երևանի համաձայնագրերի, ինչպես նաև Ալեքսանդրապոլի պայմանագրի ու դրանց նախորդած դիվանագիտական գործընթացների բազմակողմանի և անկողմնակալ վերլուծությունը՝ դրանից բխող ճիշտ եզրակացություններով, արդեն այսօր, մեր պետության առջև ծառայած բազում մարտահրավերների ֆոնի վրա առավել քան այժմեական է ու հրատապ, քանզի նոր սխալներ կամ բացթողումներ պատմությունը մեզ կարող է և չներել:

Արցախյան հիմնախնդրի արդարացի լուծումը, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն այսօր մեր նորանկախ պետականության արտաքին քաղաքական կարևորագույն հիմնախնդիրներից են, հիմնախնդիրներ, որոնց լուծումը մեզանից պահանջելու է լուրջ դիվանագիտական ջանքեր և անպայմանորեն ենթադրելու է նաև սահմանային ու տարածքային հարցերի վերանայում:

Վերը նշված փաստարկներով էլ հենց փորձել ենք հիմնավորել մեր կողմից ուսումնասիրության առարկա դարձած թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը:

ԱՏԵՆԱՆՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է արխիվային վավերագրերի, մամուլի համապատասխան նյութերի, ժամանակի պետական ու հասարակական քաղաքական գործիչների հուշագրությունների ինչպես նաև պատմագիտական գրականության հիման վրա անկողմնակալ կերպով լուսաբանել Հայաստանի տարածքային ու սահմանային խնդիրները 1918-1920 թթ. կայացած խորհրդածողվներում և կնքված համաձայնագրերում ու պայմանագրերում: Ելնելով ատենախոսության նպատակից մեր առջև դրել ենք հետևյալ կոնկրետ խնդիրները.

- Քննարկվող ժամանակահատվածում ստորագրված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա հնարավորինս ճշգրտել Հայաստանի սահմաններն ու դրանցում ներառված տարածքները
- Անկողմնակալ կերպով քննական վերլուծության ենթարկել Հայաստանի տարածքային ու սահմանային խնդիրներին առնչվող դիվանագիտական գործընթացները և բացահայտել դրանց ընդունելի ու մերժելի կողմերը
- Ներկայացնել խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ հայ քաղաքական մտքի տարբեր ուղղությունները և բացահայտել, թե որքանով էին դրանք իրատեսական
- Մեր ժամանակների պահանջներին ու հրամայականներին համապատասխան, վեր հանել այն օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները, որոնք ի չիք

դարձրեցին Հայաստանի տարածքային ու սահմանային հարցերում հիշյալ ժամանակաշրջանի հայ պետական ու կուսակցական այրերի հույսերն ու ակնկալիքներն ինչպես դաշնակիցներից, այնպես էլ Խորհրդային Ռուսաստանից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ատենախոսությունը շարադրելիս կիրառել ենք պատմության ուսումնասիրման պատմաքննական, պատմավերլուծական մեթոդը, որը ենթադրում է փաստական նյութի ու պատմական իրադարձությունների խորը և բազմակողմանի քննական վերլուծություն՝ դրանից բխող համապատասխան եզրակացություններով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ժամանակագրական առումով ուսումնասիրությունն ընդգրկում է 1918–1920 թթ. ժամանակահատվածը և այդ ժամանակահատվածում տեղի ունեցած խորհրդաժողովները, կնքված այն համաձայնագրերն ու պայմանագրերը, որոնք վերաբերել են Հայաստանի տարածքների ու սահմանների խնդիրն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: 1918-1920 թթ. գումարված խորհրդաժողովներով, ստորագրված համաձայնագրերով ու պայմանագրերով Հայաստանի տարածքների ու սահմանների ձգձգրտումն իր ամբողջության մեջ մինչև օրս առանձին ուսումնասիրության առարկա չի հանդիսացել: Սույն ատենախոսությունը նպատակ ունի հնարավորության սահմաններում լրացնելու այդ բացը: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ փորձ ենք արել մեր ժամանակի ոգուն ու պահանջներին համապատասխան վերլուծել Հայաստանի սահմանային և տարածքային խնդիրներին առնչվող քաղաքական ու դիվանագիտական գործընթացները:

Ատենախոսության գիտական նորույթի առումով ցանկանում ենք կարևորել այն փաստը, որ քննարկվող ժամանակահատվածում ստորագրված պայմանագրերով ու համաձայնագրերով փորձել ենք ձգձգրտել Հայաստանի սահմաններն ու դրանցում ներառված տարածքները:

Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ ատենախոսության մեջ քննական վերլուծության ենք ենթարկել Հայաստանի տարածքներին ու սահմաններին առնչվող դիվանագիտական գործընթացներում ներգրավված հայ պետական ու քաղաքական գործիչների մոտեցումներն ու դիրքորոշումները՝ ցույց տալով դրանց ընդունելի ու մերժելի կողմերը:

Բացի վերը նշվածից, փորձել ենք քննադատական մոտեցում ցուցաբերել խորհրդային պատմագիտության մեջ տարածում գտած այնպիսի մի արտահայտության նկատմամբ, ինչպիսին «վիճելի տարածքներ» արտահայտությունն է, որը վերաբերում է բուն հայկական տարածքներին՝ Ջանգեղուրին, Նախիջևանին, Ղարաբաղին, Ջավախքին, Լոռուն և այլն: Մեր կարծիքով այսուհետև այդ արտահայտության փոխարեն պետք է կիրառել «հարևան Ադրբեջանի և Կրաստանի տարածքային հավակնությունները հայկական տարածքների՝ Ղարաբաղի, Ջանգեղուրի, Նախիջևանի, Ջավախքի, Լոռու նկատմամբ» արտահայտությունը: Ճիշտ է, 1918-1920 թթ. Հայաստանի իշխանությունները թույլ տալով լուրջ սխալ համաձայնվում էին «վիճելի

տարածքներ» ձևակերպման հետ, սակայն մեր համոզմամբ, դա ամենևին էլ չի նշանակում, թե մենք չպետք է քննադատենք նման մոտեցումն ու այսօր էլ շարունակենք օգտագործել այդ ձևակերպումը: Ուզում ենք ընդգծել նաև, որ շարունակելով օգտագործել «վիճելի տարածքներ» արտահայտությունը, ակամա կասկածի տակ ենք առնում դրանց բուն հայկական տարածքներ լինելու փաստը: Մեր ուսումնասիրության գիտական նորույթը պայմանավորված է այս հանգամանքով ևս:

Սույն ատենախոսությունում բարձրացված հիմնական հարցադրումները, վերլուծություններն ու եզրահանգումները, հավելվածում տեղ գտած քարտեզները կարող են օգտակար լինել դիվանագետներին, պատմաբաններին, ինչպես նաև ուսանողներին: Այս թեմայով կարող են կարդացվել մասնագիտական դասընթացներ բուհերի համապատասխան ֆակուլտետներում:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է ներկայացրել ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնը: Ատենախոսության հիմնական հարցադրումներն ու դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի հրատարակած չորս հոդվածներում:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԱՂՔՅՈՒՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ:

Ատենախոսության շարադրման ընթացքում օգտվել ենք Հայաստանի ազգային արխիվի մի շարք ֆոնդերից¹, որոնք ներառում են Հայաստանի տարածքային խնդիրներին առնչվող կամ անմիջականորեն դրանց վերաբերող բազմաթիվ նյութեր:

Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը կազմում են նաև տպագիր փաստաթղթերի ժողովածուները²:

¹Տես ՀԱԱ, ֆ. 1, գ. 2, գ. 1, ֆ. 45, գ. 1, գ. 20, ֆ. 113, գ. 1, գ. 632, գ. 1, գ. 600, գ. 3, գ. 17, գ. 3, գ. 56, ֆ. 114, գ. 2, գ. 56, գ. 63, ֆ. 200, գ. 1, գ. 8, գ. 9, գ. 12, գ. 23, գ. 80, գ. 290, գ. 424, գ. 427, գ. 440, գ. 600, գ. 604, գ. 632, գ. 2, գ. 33, գ. 53, գ. 114, ֆ. 206, գ. 1, գ. 2, ֆ. 222, գ. 1, գ. 119, գ. 132, ֆ. 275, գ. 5, գ. 217, ֆ. 276, գ. 1, գ. 119, ֆ. 430, գ. 1, գ. 26, ֆ. 1021, գ. 2, գ. 1154:

²Տես Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1960, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.), պրոֆ. Զ. Կիրակոսյանի խմբ., Երևան, 1972, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), խմբ. Գալոյան Գ., Երևան, 2000, Լազեան Գ., Հայաստան եւ հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991, Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ., փաստաթղթեր և նյութեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, թիվ 1-2, Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, Ереван, 1992, Великая Октябрьская революция и победа Советской власти в Армении (Сборник документов), Ереван, 1957, Армения в документах государственного департамента США 1917-1920 гг., Составитель Махмуриян Г. Г., Ереван, 2011, Микаелян В., Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), Материалы Полит. Архива МИД кайзеровской Германии, Ереван, 1995, Геноцид армян: ответственность Турции и

Ատենախոսության համար սկզբնաղբյուրի արժեք ունեն օգտագործված հուշագրային բնույթի հրատարակությունները³:

Ատենախոսության հետ այս կամ այն չափով առնչվող իրադարձությունները լուսաբանելու տեսանկյունից կարևոր ենք համարել նաև թուրքական որոշ սկզբնաղբյուրների⁴ ուսումնասիրությունը:

Խորհրդահայ պատմաբաններից առաջինը Բ. Բորյանն էր⁵, որը փորձել է անաչառ գնահատականներ տալ, սակայն նրանից հետո պատմական անաչառությունը հասկանալի պատճառներով մղվեց հետին պլան: Խորհրդային շրջանում հրատարակված աշխատություններից կարելի է առանձնացնել նաև Ս. Վ. Արզումանյանի, Ա. Բ. Կարինյանի, Ա. Ալիխանյանի, Ս. Խ. Կարապետյանի և Ա. Ա. Եսայանի աշխատությունները⁶:

Առավել գնահատելի են հետխորհրդային շրջանի աշխատությունները,⁷ որոնցում շատ խորհրդահայ պատմաբաններ վերանայել են իրենց նախկին

обязательства мирового сообщества. Документы и комментарии/ ред. И. Г. Барсегов, т. 2, ч. 1, Москва, 2003, և այլն:

³Տե՛ս Տէրտէրեան Հ., Հայաստանի Հանրապետութեան եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները, Լեւոն Շանթի պատվիրակութիւնը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բօստոն, թիւ 1-5, 1954, Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրուք, 1968, Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրուք, 1958, նույնի Հին թղթեր նոր պատմության համար, Բէյրուք, 1962, նույնի Կեանքի ուղիներով, Ե. Հատոր, Պէյրուք, 1966, Իրազէկ Յ., Մօտիկ անցեալից, Պէյրուք, 1956, Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ 1917-1920, Երևան, 1999, Սևադրոնեան Ավ., Հայկական Հարցը խաղաղութեան ժողովին առջեւ, Բոստոն, 1919, նույնի՝ Սարդարապատից մինչև Սեյր և Լոզան, Պոսթըն, «Հայրենիք», 1943, Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Lou Անճէլըս, 1952, Սահակյան Տ. Ղ., Ցավալի պայմանագրեր, Երևան, 2007 և այլն:

⁴Տե՛ս Ali Fuat Gebesoy, Moskova Hatiralari, Istanbul, 1955, Мустафа Кемаль, «Путь новойТурции», Литиздат Н. К. И. Д., т., 3, 1929.

⁵ Տե՛ս Борьян Б. А., Армения, международная дипломатия и СССР, Москва-Ленинград, ч.1-2, 1928-1929.

⁶Տե՛ս Արզումանյան Ս. Վ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, Կարինյան Ա. Բ., Ղաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926, Ալիխանյան Ս., Խորհրդային Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921 թթ.), Երևան, 1964, նույնի Գ. Կ. Օրջոնիկիձեն և Խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում, Երևան, 1974, Կարապետյան Ս. Խ., 1920 թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Երևան, 1965 և Եսայան Ա. Ա., «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1985, նույնի՝ Հայաստանի միջազգային իրավական դրությունը (1920-1922), Երևան, 1967:

⁷Տե՛ս Ջոհրաբյան Է. Ա., 1920 թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, նույնի՝ Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «Ղաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր-1920 թ. ապրիլ), Երևան, 2002, Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, նույնի՝ Հայկական հարցը, Երևան, 1995, Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1998, Սիմոնյան Ա., Չանգեզուրի գոյամարտը (1920-1921 թթ.), Երևան, 2000, Ղազարխեյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006, Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), Երևան, 1999, Խաչատրյան Վ., Հայ-ռուսական հարբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007, Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920,

հայեցակարգերը ոչ միայն Հայաստանի առաջին հանրապետության, այլև նրա հետ ստորագրված պայմանագրերի վերաբերյալ:

Թեմային առնչվող բազմաթիվ աշխատություններ են ստեղծվել Սփյուռքում⁸:

Առենախոսության հետ առնչվող նյութեր են պարունակում վերջին տասնամյակում արտասահմանում հրատարակված առանձին աշխատություններ⁹:

Առենախոսության շարադրման ընթացքում օգտագործել ենք նաև վերջին շրջանում լույս տեսած մեծ թվով հոդվածներ¹⁰:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Առենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից,

Երևան, 2005, նույնի՝ Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, Ղազարյան Հ., Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, գիրք առաջին և գիրք երկրորդ, Երևան, 2010 և 2012, Սարգսյան Ե. Ղ., Դավադիր գործարք, Երևան, 1994, Մելքոնյան Ա. Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, Азатян Г. Г., Судьбоносные договора, Ереван, 2000 և այլն:

⁸Տե՛ս Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ Ընդի. ժողով (1890-1924), Աթէնք, 1988, Մխիթարեան Ս., Հայկական Հարցը, Փարիզ, 1968, Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը, Հայ սպանութիւնը, Շատախ, Երեւան, 2002, Քաջազնունի Յ., Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923, Քիրքէեան Յ, Ուրուագիծ Հ.Յ.Դ. պատմութեան 1919-1924 հնգամեակի, Աթէնք, 1988, Մարրլեան Զ., Երեք դաշնագրեր, Պէյրուք, 1979, Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրենքը, Բէյրութ, 1976, Richard G. Hovannisian, The Republic of Armenia, vol. 2, 1919-1920, Berkeley-Los Angeles-London, 1982, vol. 3, From London To Sevres, February August 1920, Berkeley-Los Angeles-London, 1996, vol. 4, Between and Sickle: Partition and Sovietization, Berkeley-Los Angeles-London, 1996, Ter Minassian A., La Républqued'Armenie, Bruxelles, 1989, նույնի՝ La Question Armenienne, Paris, 1983 և այլն:

⁹ Տե՛ս Kasaba, R. The Cambridge History of Turkey Volume 4: Turkey in the Modern World, London, 2008, Tadeusz Swietochowski, Russian Azerbaijan, 1905-1920, New York, 2004, Simon Payaslian, The history of Armenia from thye origins to the present, New York, 2007, Michael M. Gunter, Armenia History and the Question of Genocide, Palgrave Miximillian Press, 2011

¹⁰Տե՛ս Հարությունյան Բ., Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերի համադրական քննության շուրջ, տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», թիվ 3, 2011, նույնի՝ Երկու ճշգրտում, տե՛ս Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, գիտաժողովի նյութեր, Երևան, 2001, Ջոհրաբյան Է., Նախիջևանի հիմնահարցը Ալեքսանդրապոլի թուրք-հայկական կոնֆերանսում, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 1, 2008, Մարրլեան Զ., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և Հայկական Հարցը (1900-1976), տե՛ս «Հայկազեան հայագիտական հանդես» 78 հ., Պէյրուք, 1977, Ներսիսյան Ա., Սևրի պայմանագրի ձախողման պատճառները, տե՛ս «Ջուսիսափայլ», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2010, Խաչատրյան Կ., Բաղայյան Գ., ՀՍԽՀ տարածքի և սահմանների ձևավորումը (1920 թվականի դեկտեմբեր-1922 թվականի սկիզբ), Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 173-198, Խաչատրյան Կ., Բաղայյան Գ., ՀՍԽՀ տարածքի և սահմանների ձևավորումը (1920 թվականի դեկտեմբեր-1922 թվականի սկիզբ), Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 173-197 և այլն:

եզրակացություններից, քարտեզներից բաղկացած հավելվածից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ ներկայացված են թեմայի այժմեականությունը, գիտական մշակվածության աստիճանը, աշխատանքի գիտական նորույթը, գործնական նշանակությունը, ժամանակագրական շրջանակներն ու մեթոդաբանությունը:

Առաջին գլուխը «ԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ», բաղկացած է երկու ենթազույխներից «Հայկական տարածքների խնդիրը Տրապիզոնի բանակցություններում» և «Բաթումի խորհրդաժողովը և Հայաստանի Հանրապետության տարածքներն ըստ Բաթումի պայմանագրի»:

Տրապիզոնի բանակցություններում թուրքական պատվիրակության նախագահ Ռեուֆ բեյը պնդում է, թե բանակցությունների հիմքը պետք է լինի Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը:

Թուրքական կողմը տեսնելով, որ Սեյմի պատվիրակությունը չի ցանկանում ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանները, բացահայտ հասկացնել է տալիս, որ Անդրկովկասն անկախ պետություն և միջազգային իրավունքի սուբյեկտ չէ:

Բանակցությունների երրորդ օրը՝ մարտի 3-ին Ռեուֆ բեյը պատասխանելով Սեյմի պատվիրակության նախագահ Չխենկելու այն հայտարարությանը, թե «Անդրկովկասը հանդես է գալիս որպես մի պետություն», նշում է, որ «պետության համար... անհրաժեշտ է, որ այս վերջինը կազմված լինի համաձայն միջազգային իրավունքի և ձեռնարկած լինի անհրաժեշտ միջոցները մյուս պետություններից ձանաչվելու համար»: Դրանից հետո, Ռեուֆ բեյը Օսմանյան կառավարության անունից խնդրում է Անդրկովկասյան պատվիրակությանը «որոշել և հայտարարել սույն կառավարության որոշ ձևը, սահմանները, պետական լեզուն և կրոնը»¹¹:

Մարտի 24-ին Ռեուֆ բեյը ներկայացնում է վերջնագիր, որով պնդում է նախկին պահանջները՝ վերջնական պատասխան տալու համար տրամադրելով 48 ժամ¹²: Սույն գիշերը Սեյմի պատվիրակության նիստ է գումարվում, որի ընթացքում արդեն ուժեղանում են զիջումների գնալու ձգտումները: Հաջորդ օրը Չխենկելին հեռագրում է Թիֆլիս հաղորդելով, որ թուրքերին պետք է հանձնել Կարսի ողջ նահանգը, բացի արևելյան մի փոքրիկ մասից, որը բնակեցված էր հայերով:

Թուրքերին պետք է հանձնվեին նաև Արդահանի շրջանի հյուսիսային մասերը և Բաթումի նահանգի Արդվինի շրջանը: Միաժամանակ Չխենկելին համոզված էր, որ թուրքերը Բաթումն էլ չեն զիջելու, քանզի արդեն գրավել էին Սարիղամիշը և Բաթումի նահանգի մի մասը: Քանի որ 48 ժամը լրանում էր, իսկ Թիֆլիսից պատասխան չէր եկել, մարտի 28-ին (ապրիլի 10-ին) Չխենկելին հաղորդում է Ռեուֆ բեյին, որ ընդունում են Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը: Մրանում կարևոր դեր են ունեցել նաև Ալ. Խատիյանը և Հովհ. Քաջազունին, որոնք նույն օրը

¹¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 30:

¹²Տե՛ս Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրուս, 1968, էջ 47, նաև՝ Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 96:

հեռագրել էին Գեգեչկորիին և Սեյմի դաշնակցական խմբակցությունը, թե «Անհրաժեշտ կը նկատենք հրաւիրելու Հ. Հ. Դաշնակցութեան ամենալուրջ ուշադրութիւնը այն բանի վրայ, որ ստեղծուած պայմաններու մէջ Պրէսթ-Լիթովսքի դաշնագրին ընդունիլը փոքրագոյն չարիք պէտք է համարել», ուստի ամենինց առաջ անհրաժեշտ էր, «որ Անդրկովկասը յայտարարէ իր անկախութիւնը»¹³:

Ապրիլի 1-ին (հին տոմարով) Գեգեչկորիին հեռագրով հրահանգում է Չխենկելու պատվիրակությանը հետ վերադառնալ, հիմք ընդունելով Սեյմի նախորդ օրվա հետևյալ որոշումը. «Նկատի ունենալով, որ Թուրքիոյ եւ Անդրկովկասի միջեւ կարելի չէր աւ խաղաղ համաձայնութեան մը գալ սահմաններու վերաբերմամբ, կ'առաջարկուի Անդրկովկասեան պատուիրակութեան անմիջապէս վերադառնալ Թիֆլիս»¹⁴:

Ստանալով հեռագիրը՝ Չխենկելին հայտնում է թուրքերին իր պատվիրակության մեկնելու մասին, միևնույն ժամանակ շեշտելով, որ բանակցությունները չեն խզվում այլ՝ ժամանակավորապէս դադարեցվում են: Ընդհանրացնելով ասվածը՝ անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ.

1. 1918 թ. սկզբներին, երբ ռուսական զորքերն արդէն դուրս էին բերվել Կովկասյան ռազմաձևակաւոց, ակնհայտ էր դառնում, որ կորցվելու են հայկական պատմական տարածքները Թուրքիայում, իսկ Բրեստ-Լիտովսկի պայմանագրից հետո՝ նաև արդէն Անդրկովկասում,

2. Տրապիզոնի բանակցությունների ձախողումը տանում էր Անդրկովկասի նոր ձևավորվող պետության պառակտմանը և հայկական պետության աստիճանական առարկայացմանը, մի բան, որը տեղի ունեցավ փոլ առ փոլ և իրավական հիմնավորում ստացավ Բաթումի պայմանագրով,

3. Տրապիզոնի բանակցություններում հայկական կողմը, փաստորեն, անտեսելով թե՛ ներքին և թե՛ արտաքին անբարենպաստ պայմանները, Հայաստանի տարածքների ու սահմանների հարցում անիրատեսական հույսեր էր փայլիայում:

Սեյմի պատվիրակության Տրապիզոնից վերադառնալուց հետո պարզվում է, որ թուրքերն առանց կռվի գրավել են Բաթումը: Ստացվում է, որ Կարսը զոհաբերելով՝ Բաթումը պահել փորձող վրացիները կորցնում են նաև այն:

Ստեղծված պայմաններում Գեգեչկորու կառավարությունը հրաժարական է տալիս և վարչապետ է դառնում Չխենկելին: Ապրիլի 9-ին Անդրկովկասը հռչակում է իր անկախությունը¹⁵:

Չխենկելու կառավարությունը կազմում է մի նոր պատվիրակություն՝ թուրքերի հետ բանակցությունները շարունակելու նպատակով: Նախագահն ինքն էր: Հայերի կողմից պատվիրակության մեջ էին՝ Ալ. Խատիսյանը, Հովհ. Քաջազնունին, Մ. Բունիաթյանը, Թերզիբաշյանը և Ս. Վրացյանը:

¹³ Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 97:

¹⁴ Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 50:

¹⁵ Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 105, Аркомед С. Т., указ. соч., с. 66, Մինախորեան Վ., Բաթումի խորհրդաժողովը, «Հայրենիք» ամսագիր, թիւ 14, մարտ, 1936, էջ 93-94:

Թուրքական պատվիրակության կազմում էին՝ Խալիլ բեյը (նախագահ) և Վեհիբ փաշան: Բանակցություններին մասնակցում էր նաև Գերմանիայի ներկայացուցիչ Ֆոն Լոսովը:

Մայիսի 11-ին տեղի ունեցած առաջին նիստում թուրքական պատվիրակության ղեկավար, արդարադատության նախարար Խալիլ բեյը հայտարարում է, «քանի որ Բրեստ-Լիտովսկից հետո կողմերի միջև արյուն է թափվել, ապա այդ պայմանագիրը չի կարող հիմք ծառայել ներկա բանակցությունների համար»¹⁶:

Այնուհետև, նա Չխենկելուն ներկայացնում է Թուրքիայի նոր տարածքային պահանջներով պայմանագրի նախագիծը: Նախագծի համաձայն Թուրքիային էին թողնվելու ոչ միայն Արևմտյան Հայաստանը, Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները, այլև՝ Թիֆլիսի նահանգից Ախալցխայի և Ախալքալաքի գավառների մի մասը, Երևանի նահանգի արևմտյան մասը, ներառյալ Արաքս գետի հովիտը և Կարսը Զուլֆային միացնող երկաթգծի հատվածը¹⁷:

Այս ամենից գատ, Անդրկովկասյան պետությունը պետք է ենթարկվեր Օսմանյան կայսրությանը¹⁸:

Անդրադառնալով արդեն Բաթումի պայմանագրով նախատեսված Հայաստանի տարածքների ու սահմանների խնդրին ուզում ենք շեշտել, որ ճիշտ չէ այն տեսակետը, թե իբր Հայաստանն այդ պայմանագրով տարբեր տվյալներով 9-12 հազ. քառ. կմ տարածք էր զբաղեցնում, այն պարզ պատճառով, որ դրանով գծվում էին միայն Թուրքիայի հետ սահմանները, իսկ Վրաստանի և Ադրբեջանի հետ սահմաններն անորոշ էին: Ուրեմն, Հայաստանի սահմանները, որոնք գծվում էին 14 կետեր ունեցող դաշնագրի 2-րդ հոդվածով չէին կարող ընդգրկել վերը նշված տարածքը:

Բաթումի պայմանագրով Հայաստանի տարածքները որոշելը ճիշտ չէ նաև այն առումով, որ Ղարաբաղն այդ ժամանակ de facto անկախ միավոր էր, Չանգեզուրում ամրացել էր Անդրանիկը, իսկ Նախիջևանում անորոշ իրավիճակ էր:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ.

1.Բաթումի պայմանագրով գծվեցին Անդրկովկասի երեք հանրապետությունների և Թուրքիայի միջև եղած սահմանները, իսկ այդ երեք հանրապետությունների միջև սահմանները մնացին անորոշ, ինչը նշանակում է, որ դժվար է որոշել Հայաստանի տարածքներն այդ պայմանագրով,

2.Հայաստանի հարևաններ Վրաստանն ու Ադրբեջանը ստորաբարշ դիվանագիտական գործողություններով ապօրինի տարածքային

¹⁶ St'u Tadeusz Swietchowski, Russian Azerbaijan, 1905-1920: The shaping of a National identity in a Muslim community, Cambridge University Press, 1985, p.126.

¹⁷ St'u Tadeusz Swietchowski, Russian Azerbaijan, 1905-1920: The shaping of a National identity in a Muslim community, Cambridge University Press, 1985, p.126.

¹⁸ Документы и материалы внешней политики Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 272-279, Վրացեան Ա., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 146, Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 69, Լազեան Գ., Հայաստան եւ Հայ դատը ըստ դաշնագրերու, Գահիրէ, 1942, էջ 98:

հավակնություններ էին հանդես բերում Հայաստանի Հանրապետության նկատմամբ՝ նպատակ ունենալով վերջնականապես քայքայել այն,

3.1918 թ. հունիսի 4-ին կնքված Բաթումի պայմանագրի 2-րդ կետով նախանշված սահմաններով Հայաստանն այդպես էլ երբեք գոյություն չունեցավ:

Ատենախոսության *երկրորդ գլուխը* վերնագրված է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՐՑՆ ԸՍՏ ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ»: Այն նույնպես բաղկացած է երկու ենթագլուխներից՝ «Հայ քաղաքական մտքի ուղղվածությունները Հայաստանի տարածքների վերաբերյալ մինչև Սևրի պայմանագիրը» և «Հայաստանի Հանրապետության տարածքների հարցն ըստ Սևրի պայմանագրի», որոնցից առաջինը նվիրված է հայ քաղաքական մտքի ուղղվածություններին Սևրի պայմանագրից առաջ, իսկ երկրորդը՝ ՀՀ սահմանների հիմնահարցին ըստ Սևրի պայմանագրի:

1919 թ. փետրվարի 12-ի Փարիզի վեհաժողովին ներկայացված հայկական պահանջների հռչակագրով Ավ. Ահարոնյանը և Պողոս Նուբարը պահանջում էին հետևյալ տարածքները.

«1. Վանի, Բիթլիսի, Դիարբեքրի, Խարբեռլի, Սվասի (Սեբաստիա), Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթները՝ բացառությամբ Տիգրիսի վտակներից հարավ և Օրդու-Սվազ գծից արևմուտք ընկած շրջանների:

2. Կիլիկյան չորս սանջակները՝ Մարաշը, Գոզանը (Սիս), Ջեբել-Բերեքեթը և Ադանան՝ Ալեքսանդրեթի նավահանգստով:

3. Հայկական Հանրապետությունը Կովկասում, ներառյալ Երևանի նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը (Լոռին և Ախալքալաքը), Ելիզավետպոլի նահանգի հարավարևմտյան մասը (Լեռնային Ղարաբաղը և Ջանգեզուրը) և Կարսի մարզը, բացառյալ Հյուսիսային Արդահանը»¹⁹:

Չնայած ոմանց արտաքուստ ջերմ վերաբերմունքին՝ հենց սկզբից Ղաշնակիցների դժկամությունն հայկական պատվիրակությունների պահանջների նկատմամբ ակնհայտ էր: Նման դժկամության պատճառները, մեր կարծիքով, հետևյալն էին.

1. Արևելահայերի կողմից իրավացիորեն պահանջվող շատ տարածքների նկատմամբ (Լոռի, Ախալքալաք, Ղարաբաղ, Նախիջևան և այլն) անհիմն հավակնություններ ունեին հարևան Ադրբեջանն ու Վրաստանը: Իսկ Ղաշնակիցները նրանց շատ պահանջներ չէին կարող անտեսել:

2. Կիլիկիայի նկատմամբ հավակնություններ ուներ Ֆրանսիան, քանզի 1916 թ. ստորագրված Սայքս-Պիկոյի համաձայնագրով, այս տարածքը մտնելու էր Ֆրանսիայի ազդեցության գոտու մեջ:

3. Արդեն քեմալա-բոլշևիկյան դաշինքի ձևավորման շրջանում Ղաշնակիցները փորձում էին սիրաշահել Քեմալին, քանզի նեղուցների հարցում Ռուսաստանին հետ մղելը նրանց համար երկրորդական պլան էր մղում Հայկական հարցը:

1920 թ. հունվարի 19-ին Ղաշնակիցների Գերագույն խորհուրդը de facto ձանաչեց Հայաստանի Հանրապետությունը:

¹⁹ Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. I, էջ 303:

Հայաստանին էր վերաբերում Սևրի պայմանագրի 3-րդ մասի 6-րդ բաժինը (88-93 հոդվածներ) ամբողջությամբ: Հայաստանի տարածքային հարցերն արտացոլված են 89-րդ հոդվածում:

Սևրի պայմանագրի այս հոդվածով Հայաստանին որևէ որոշակի տարածք չի տրվում, այլ ընդամենը խոսվում է նշված վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև «սահմանագատման» համաձայնության մասին, որը պետք է որոշեր ԱՄՆ-ը: Փաստորեն, Սևրի պայմանագրի այս հոդվածը ոչ թե ճանաչում էր այդ տարածքները ՀՀ մաս, այլ դրանցից որոշ մասեր կճանաչեր ԱՄՆ-ի կողմից սահմանագիծն որոշելուց հետո միայն: Այլ կերպ ասած, 89-րդ հոդվածով Հայաստանին տրվելիք տարածքները բավականին անորոշ էին: Հստակ էին միայն այն վիլայեթները, որոնցից տարածքներ էին հատկացվելու Հայաստանին՝ համաձայն Վիլսոնի վճռի:

Վիլսոնի իրավարար վճռի համաձայն Արևելյան Հայաստանին, որն ուներ 71.330 քառ. կմ տարածք, միավորվելու էր 90.000 քառ. կմ Արևմտյան Հայաստանից: Արդյունքում ՀՀ տարածքը կազմելու էր 161.330 քառ. կմ:

Այստեղ ուզում ենք ուշադրություն հրավիրել այն փաստի վրա, որ ըստ Ա. Պապյանի Վ. Վիլսոնի իրավարար վճռով «Հայաստանի Հանրապետության տիտղոսն ու իրավունքները ճանաչվում էին նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգների վրա՝ **ընդհանուր առմամբ 103.599 կմ²** (ընդգծումը մերն է. - Ջ. Թ.)»²⁰: Հեղինակի հավաստմամբ, ԱՄՆ-ում գտնվող Վ. Վիլսոնի իրավարար վճռին կից փաստաթղթերում այս տարածքը նշվում է մոտ 40.000 մղոն, որն էլ վերածելով կիլոմետրի՝ ստանում ենք այս թիվը:

Պայմանագրի 92-րդ հոդվածում նշվում է, որ «Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելույն կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ», իսկ եթե շահագրգռված պետությունները չեն կարողանա ընդհանուր համաձայնությամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կորոշեն գլխավոր դաշնակից տերությունները, որոնք դրա հետ միասին պետք է հոգ տանեն սահմանագատումը տեղում գծանշելու մասին»²¹:

Այսպիսով 92-րդ հոդվածը հաստատում է, որ դեռևս որոշված չեն Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև եղած սահմանները:

Ուզում ենք ավելացնել նաև, որ Սևրի պայմանագրի 62-րդ հոդվածով Եփրատ գետից արևելք ընկած Հայաստանի պատմական տարածքները ճանաչվեցին Քուրդիստանին պատկանող:

Սևրի պայմանագրով Հայաստանի տարածքային ու սահմանային հարցերի վերաբերյալ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

²⁰ Տե՛ս Պապյան Ա., Հայրենատիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր հոդվածների ժողովածու, Երևան, 2012, էջ 16:

²¹ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 676-677, նաև՝ Լազեան Գ., Հայաստան եւ հայ դատը, էջ 210-212, նաև՝ Վրացեան Ա., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 440-441 և այլն:

1.Սևրի պայմանագրով Թուրքիային չի պարտադրվել որոշակի տարածքներ զիջելու ՀՀ-ին, այլ՝ նրան պարտադրվում էր ընդամենը ընդունելու այս երկու պետությունների միջև հայտնի վիճակներով այն սահմանագիծը, որը կգծեր ԱՄՆ-ի նախագահը:

2.Սևրի պայմանագրով Հայաստանի Հանրապետության սահմանները հստակորեն չեն մատնանշվել հարևան Վրաստանի և Ադրբեջանի հետ:

Երրորդ գլուխը՝ «ՀԱՅՎԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ՀՀ-ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՒՒՍԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1920 Թ. ՕԳՈՍՏՈՍ–ՂԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ» բաղկացած է երեք ենթագլուխներից՝ «Հայաստանի տարածքներն ըստ Թիֆլիսի համաձայնագրի», «Հայաստանի տարածքներն ըստ 1920 թ. դեկտեմբերի 2–ի Երևանի համաձայնագրի» և «Ալեքսանդրապոլի խորհրդածրոջով: Հայաստանի Հանրապետության տարածքներն ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի»:

Թիֆլիսի համաձայնագրի 2-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության զորքերը գրավում են հետևյալ զիծը. Շահթախտ-Խոկ-Ազնաբերդ-Սուլթանբեյ և այնուհետև Կուկից հյուսիս և Բազարչայից արևմուտք ընկած զիծը: Ղազախի գավառում՝ մինչև սույն թվականի հուլիսի 30-ը նրանց կողմից գրաված զիծը:

ՌՍՖՆՀ-ի զորքերը գրավում են վիճելի մարզերը, Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը, բացառությամբ ներկա համաձայնագրով Հայաստանի Հանրապետության զորքերի տեղադրման համար որոշված շրջանի:

3-րդ կետով Խորհրդային զորքերի կողմից վիճելի տարածքների գրավումով չի կանխորոշվում այդ տարածքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության կամ Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության իրավունքների հարցը: Այդ ժամանակավոր գրավումով ՌՍՖՆՀ-ը նպատակ ունի ստեղծել բարենպաստ պայմաններ՝ Հայաստանի և Ադրբեջանի տարածքային վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու այն հիմունքներով, որ կմշակվեն մոտ ժամանակներս ՌՍՖՆՀ-ի և Հայաստանի Հանրապետության միջև կնքվելիք հաշտության պայմանագրում:

5-րդ կետի համաձայն մինչև ՌՍՖՆՀ-ի և Հայաստանի Հանրապետության միջև պայմանագրի կնքումը երկաթգծի Երևան-Թաթևաթ-Ջուլֆա հատվածի շահագործման իրավունքը տրվում է Հայաստանի երկաթուղային ճանապարհների վարչությանը, սակայն պայմանով, որ այն չօգտագործվի ռազմական նպատակներով²²:

Այսպիսով դժվար չէ նկատել, որ Թիֆլիսի համաձայնագրով ՀՀ-ից դուրս էին մնում Ջանգեզուրն ու Ղարաբաղը և Նախիջևանը՝ Շահթախթից դեպի հարավ՝ ամբողջովին:

Արդեն 1920 թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում նախաստորագրված ռուս–թուրքական պայմանագրի նախագծով կողմերը նախատեսում էին՝ ա. չճանաչել որևէ պայմանագիր, որը պարտադրված էր, բ. Ռուսաստանը չէր ընդունելու ցանկացած համաձայնագիր, որը վերաբերվում էր Թուրքիային և վավերացված

²² Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թ., էջ 102–103, նաև՝ Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 256:

էր նրա Ազգային մեծ ժողովի կողմից, գ. չեղյալ էին համարում Ռուսաստանի և Թուրքիայի միջև մինչև այդ կնքված դաշնագրերը, դ. ընդունում էին բոլոր ժողովուրդների առևտրական նավերի նեղուցներով ազատ անցնելը, այդ առումով ճշտելով միջազգային օրենքները, սակայն այն պայմանով, որ չվնասվեր Թուրքիայի ամբողջականությունը և Կ. Պոլսի ապահովությունը և այլն²³:

Հայաստանի համար ամենաձակատագրականը համաձայնագրի 3-րդ կետն էր, որով նախատեսվում էր ամենակարճ ժամկետում ապահովել երկու երկրների միջև մարդկանց և ապրանքների տեղափոխությունը²⁴:

1920 թ. հոկտեմբերի 11-ին Երևան է ժամանում Բ. Լեգրանը: Հոկտեմբերի 13-ին նա Հայաստանի կառավարությանը ներկայացնում է վերջնագիր, որի պայմանների մասին Ս. Վրացյանը հետևյալն է գրում. «Հոկտ 13-ին Լեգրանը ներկայացրեց մի շարք պահանջներ, որոնցից գլխավորներն էին 1) հրաժարվել Սևրի պայմանագրից, 2) թույլ տալ խորհրդային զորքերին, իրենց ռազմամթերքով, անցնել Հայաստանի երկաթուղիներով ու խճուղիներով՝ միանալու համար Մուստաֆա Քեմալի զորքերին, դաշնակիցների հետ կռելու նպատակով, 3) սահմանավէճը Հայաստանի եւ հարեւանների միջեւ լուծել խորհրդային Ռուսաստանի միջնորդութեամբ»²⁵:

Ստեղծված բարդ իրավիճակում նոյեմբերի 21-ին Բյուրո-կառավարությունը հրաժարական է տալիս: Նոյեմբերի 23-ին կազմվում է ՀՀ վերջին՝ Ս. Վրացյանի գլխավորած կառավարությունը: Ս. Վրացյանն անմիջապես սկսում է բանակցությունները Լեգրանի հետ:

Այդ ժամանակ Ս. Վրացյանին Ալեքսանդրապոլից ուղիղ հեռագրաթելի մոտ է կանչում Ալ. Խատիսյանը: Նա հաղորդում է, որ թուրքերը ներկայացրել են հաշտության պայմանները և տվել են վերջնագիր՝ 48 ժամում ընդունելու կամ մերժելու:

Կարծում ենք, որ թուրքերն, իրոք, տեղյակ էին բոլշևիկների վերջնագրից և ցանկանում էին Հայաստանի խորհրդայնացումից առաջ նրա հետ կնքել պայմանագիր: Ալ. Խատիսյանի հետ խոսակցությունն ավելի է նպաստում Հայաստանի խորհրդայնացման համաձայնության կայացմանը և «եօթի դէմ քսանհինգ քուէով որոշուեցաւ իշխանութիւնը յանձնել կոմունիստներուն»²⁶:

Դեկտեմբերի 2-ին, կեսօրից հետո, համաձայնագիրը ստորագրվում է մի կողմից՝ Լեգրանի, մյուս կողմից՝ Դրոյի և Տերտերյանի միջև²⁷: Հայաստանի սահմանների հարցին վերաբերում է համաձայնագրի 3-րդ կետը, ուր մասնավորապես ասվում է.

«3.-Ռուսաստանի Խորհրդային կառավարութիւնը ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան հողերի մէջ

²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 17, թ. 10:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 458:

²⁶ Տե՛ս Արժրունի Վ., նշվ. աշխ., էջ 333:

²⁷ Համաձայնագիրը տե՛ս նույն տեղում, էջ 335-336, Լազեան Գ., Հայաստան եւ հայ դատը..., էջ 263-264 և այլն:

անվիճելի կերպով մտնում են՝ Երեւանի նահանգը իր բոլոր գավառներով, Կարսի նահանգի մի մասը, որ զինվորական տեսակետից կ'ապահովէ երկաթուղու տիրապետութիւնը՝ Ջաջուռ կայարանից Արաքս կայարանը, Գանձակ նահանգի Ջանգեզուր գաւառը եւ Ղազախ գավառի մի մասը օգոստոսի 10-ի համաձայնութեան սահմաններում, եւ Թիֆլիս նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետութեան տակ էին գտնուիւմ մինչեւ 1920 թ. սեպտեմբերի 28»²⁸:

1920 թվականի դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագրի երրորդ հոդվածի համաձայն նորահռչակ խորհրդային Հայաստանի համար նախատեսված տարածքը պետք է կազմեր ավելի քան 43.000 կմ քառ.²⁹:

Այս առումով Ա. Հակոբյանը հետևյալն է գրում.«Տարածքային-սահմանային խնդրի քիչ թե շատ հետևողական ու արդարացի լուծման դեպքում, կարծում ենք, որ ՀՍԽՀ տարածքը կարող էր հասնել առնվազն 40.000 քառ կմ-ի»³⁰:

1920 թ. նոյեմբերին ակնհայտ է դառնում Հայաստանի պարտությունը թուրք-հայկական պատերազմում: Նոյեմբերի 18-ին կողմերի միջև ստորագրվում է զինադադար: Հաշտության պայմանագիր կնքելու նպատակով հայկական պատվիրակությունը Ալ. Խատիսյանի գլխավորությամբ մեկնում է Ալեքսանդրապոլ:

Թուրքական Ազգային մեծ ժողովի կողմից բանակցությունները վարում էին Քյազիմ Կարաբեքիր փաշան, Համեդ բեյը և Սուլեյման Նաճարի բեյը³¹: Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչն էր Մդիվանին:

Առաջին հանդիպման ընթացքում, Կարաբեքիրը հայտնում է, որ Թուրքիան «պատրաստ է ամուր եւ երկարատեւ հաշտութիւն կնքել Հայաստանի հետ»: Ալ. Խատիսյանը նույնպէս հայտնում է հայկական կողմի նման ցանկութեան մասին³²:

Նոյեմբերի 30-ին թուրքերն ուղարկում են դաշնագրի իրենց նախագիծը, որով «Հայաստանին կը ձգուէր 27.000 քառ. քիլոմետր, Կարսի նահանգը եւ Սուրմալուի գաւառը կ'անցնէին Թուրքիոյ, իսկ Նախիջեւանն ու Ջանգեզուրը կը տրուէին Ադրբեջանի հովանավորութեան տակ: Հայաստանին իրաւունք կը տրուէր ունենալ 1200 զինուոր, 20 գնդացիր, 8 թնդանօք: Ժանտարմների թիւը չէր սահմանափակուէր: Բերդերը կը ձգուէին, սակայն միայն փոքր տեսակի թնդանօթներով: Ղաշնակիցներու ներկայացուցիչները պետք է ձգէին Հայաստանը»: ՀՀ պատվիրակությունը նոյեմբերի 30-ի երեկոյան ուղարկում է իր պատասխանը, իսկ դեկտեմբերի 1-ին առավոտյան ժամը 11-ին տեղի է ունենում երրորդ նիստը, որի ընթացքում թուրքերը վերջնագրի ձևով ներկայացնում են

²⁸ Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 502, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 383:

²⁹ Տե՛ս Խաչատրյան Կ., Բաղայան Գ., ՀՍԽՀ տարածքի և սահմանների ձևավորումը (1920 թվականի դեկտեմբեր-1922 թվականի սկիզբ), Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 185:

³⁰ Տե՛ս Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, էջ 93-94:

³¹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 93:

³² Նույն տեղում:

իրենց պատրաստած դաշնագրի նախագիծը՝ պահանջելով ընդունել այն, հակառակ դեպքում սպառնալով շարժվել Երևանի վրա³³:

Երեկոյան ժամը 8-ին տեղի է ունենում խորհրդաժողովի չորրորդ և վերջին նիստը, որի ընթացքում հայերը հայտարարում են, թե ընդունում են դաշնագիրը: ՀՀ պատվիրակությանը հաջողվում է մի քանի փոփոխություններ մտցնել հոգուտ հայոց (Աղբաբայի մի մասը Հայաստանի սահմանների մեջ մտցնելը, գորքի քանակը 1200-ից 1500-ի հասցնելը)³⁴:

Դրոն նորաստեղծ կառավարության անունից պայմանագրի ստորագրելը կամ չստորագրելը թողնում է Ալ. Խատիսյանի հայեցողությանը: Ստացվում է, որ այդ կառավարությունը լիազորում էր Ալ. Խատիսյանին գործելու: Այս փաստը կարող է նշանակել, որ Ալեքսանդրապոլում հայկական պատվիրակությունը եթե գնացել է պայմանագրի ստորագրմանը, ապա՝ դա արել է Հայաստանի խորհրդային իշխանության հրահանգով: Ուրեմն, եթե կնքված պայմանագիրը խայտառակ էր, ապա՝ դրա մեղավորը նաև հենց այդ իշխանությունն էր: Ալ. Խատիսյանը կարող էր նաև չստորագրել պայմանագիրը, քանզի նաև այդպես վարվելու հրահանգ ուներ Սիլիհնից և Դրոյից:

Ինչ վերաբերում է այն խնդրին, թե չստորագրելու դեպքում թուրքերը կշարունակեին առաջխաղացումը, ապա՝ դա նույնպես վիճելի էր, և կարելի է համաձայնել Ա. Հակոբյանի հետ, որ հազիվ թե թուրքերը շարժվեին դեպի Երևան³⁵:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրվում է դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը ժամը 2-ին: Դրա բնագիրը Հայաստանում չի պահպանվել: Հայաստանի ազգային արխիվում պահպանվել են դրա հայերեն և ռուսերեն թարգմանությունները³⁶:

Պայմանագրի 2-րդ հոդվածով Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանագիծը հետևյալ կերպ էր մատնանշվում. «Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանը սկսւում է Կարա-Սուլին Արաքսի մէջ թափւած կետից, հետեւում է Հուսիս Արեւելք Թեխնիս (Տիգնիս- Ջ. Թ.) Մեծ Քիւմլի (Մեծ Դնլու - Ջ. Թ.), Քըզլլ Դաշ (Դըզլլ Դաշ – Ջ. Թ.) մինչեւ Մեծ Աղբաբա, հետո Կակի Դաղի (10282) (Կաքի-դաղ – Ջ. Թ.) հարաւ գտնւող Շարուր եւ Շահթախթիի շրջաններում անցնում է 8272 բարձունքը, Կամա-սու լեռը (8160) (Գամասութ Դաղ – Ջ. Թ.), Կարա-Կոլջակ գիւղը-Սահաթ լեռը (Սահաթ Դաղ- Ջ. Թ.) 7868 (ծանոթութիւն 3680), Արփաչայի վրա (5 վերստանոց 1908ի քարտէս) Սարա բուլաղ 8711 - Արարատ կայարանը մինչեւ այն կետը, ուր Կարա-Սուն թափվում է Արաքսի մէջ»³⁷:

Հայ-թուրքական սահմանագիծը չէր հասցվում մինչև հայ-վրացական սահմանը (Ուչթափալար լեռը), ուստի և Բ. Հարությունյանի դիտարկմամբ Մեծ Աղբաբա լեռնագագաթից մինչև Ուչթափալար լեռն ընկած տարածքը թուրքերի

³³ Տե՛ս Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 308-309:

³⁴ Նույն տեղում, էջ 311:

³⁵ Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 61:

³⁶ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 93-99, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 15-17:

³⁷ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 93, նույնը մի փոքր այլ խմբագրությամբ տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 684:

կողմից ժամանակավորապես դիտվում էր որպես հայ-վրացական սահմանագիծ³⁸:

Բ. Հարությունյանի մատնանշումով Ախուրյանի այդ ափին գտնվող հայաբնակ Մեծ Թիզնիսն (Թիխնիս) անցել է Թուրքիային, իսկ ծախ ափինը՝ Հայաստանին, Մուրադ-չայ և Ղմլու գետերի ջրբաժանում գտնվող Մեծ Ղմլուն թողնվում էր Հայաստանին, իսկ Փոքր Ղմլուն՝ Թուրքիային³⁹:

Ալեքսանդրապոլի դաշնագրի 2-րդ հոդվածի 2-րդ մասը վերաբերում է Նախիջևանի, Շարուրի և Շահթախթի շրջաններին: Այնտեղ կարդում ենք. «Նախիջևանի, Շարուրի եւ Շահթախթի շրջանների ապագայում հանրաքվեի միջոցով մի վարչակազմ պիտի հաստատուի, Հայաստանը իրավունք չունի միջամտելու այդ վարչակազմին ինչ էլ որ լինի նրա ծելը: Այդ շրջանները ժամանակավորապես պիտի մնան Թուրքիոյ հովանաւորութեան տակ»⁴⁰:

Սահմանագիծը Շարուր-Նախիջևանի և Շահթախթի շրջաններով անցնում էր Կուբի դաղից Ջամսուր-դաղ, Ղուրդ-ղուլաղ գյուղ, ապա՝ Սայաթ լեռ, որտեղից այն տեղը, ուր Ղարասուն թափվում է Արաքսը: Ինչպես իրավագիտորեն նկատել է Ա. Հակոբյանը՝ «փաստորեն Ջանգեզուրի և Նախիջևանի միջև սահմանագիծ չի նշվում»⁴¹:

Ալեքսանդրապոլի պայմանագրով հնարավոր չէ հաշվել Հայաստանի տարածքը. քանի որ ա) ճշտված չէր Նախիջևանի և Ջանգեզուրի միջև եղած սահմանը, բ) Ջանգեզուրն անկախ քաղաքական միավոր էր և գտնվում էր Նժդեհի իշխանության ներքո, գ) Ալեքսանդրապոլի գավառը, Կարսի մարզից հատկացվելիք տարածքը մնում էին թուրքերի կողմից ռազմակալած (թուրքական զորքերն այնտեղից հեռացան 1921 թ. ապրիլի 22-ին միայն՝ խորհրդային իշխանության կտրուկ պահանջից հետո), դ) Լեռնային Ղարաբաղի կացությունն անորոշ էր, ե) պարզ չէր, թե ումն է անցնելու Լոռվա չեզոք գոտին:

Որպես փաստաթուղթ Ալեքսանդրապոլի պայմանագիրը չիրականացավ, քանզի չվավերացվեց, թեպետ այդ պետք է արվեր մեկ ամսից⁴²:

ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ հանրագումարի բերելով հետազոտության հիմնական արդյունքները՝ նշվում է, որ.

1. 1918 թ. սկզբներից աստիճանաբար ակնհայտ էր դառնում, որ կորցվելու են հայկական պատմական տարածքներն Արևմտյան Հայաստանում, իսկ Բրեստ-Լիտվսկի պայմանագրից հետո՝ նաև Անդրկովկասում:

2. Բաթումում Հայաստանի անկախությունը թուրքերը ճանաչեցին միանգամայն անորոշ տարածքների վրա, անկախ նրանից, որ Բաթումի պայմանագրով մատնանշվեց Անդրկովկասյան հանրապետությունների և Թուրքիայի միջև սահմանագիծը:

³⁸Հարությունյան Բ., Երկու ճշգրտում, տե՛ս Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, գիտաժողովի նյութեր, Երևան, 2001, էջ 72:

³⁹ Հարությունյան Բ., Երկու ճշգրտում, տե՛ս Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, գիտաժողովի նյութեր, էջ 72:

⁴⁰ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 93-94, նաև՝ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 684:

⁴¹ Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 86:

⁴²ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 99:

3. Բյուրո - կառավարության գործունեության շրջանում առկա է եղել ավելի նեղ սահմաններով Հայաստանի պահանջին նպատակաուղղված քաղաքական մտածողություն:

4. Սևրի պայմանագրով Հայաստանի տարածքներն ու սահմանները հստակ չէին նշվում, այլ ընդամենը շեշտվում էր Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներով Թուրքիայի և Հայաստանի միջև «սահմանատման» համաձայնության մասին, որը պետք է որոշեր ԱՄՆ-ի նախագահը:

5. 1920 թ. օգոստոսի 10-ի Թիֆլիսի հայ-ռուսական համաձայնագրով ՀՀ-ից փաստորեն անջատվում էին Ղարաբաղը, Ջանգեզուրը և Շահթախթից հարավ ամբողջ Նախիջևանը և այդ բնիկ հայկական տարածքները հայտարարվեցին այսպես կոչված «վիճելի տարածքներ»:

6. Դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով Հայաստանին տրվում էր Երևանի ամբողջ նահանգը՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Նախիջևանի, Նոր Բայազետի, Շարուր-Դարալագյազի և Սուրմալուի գավառները:

7. Ալեքսանդրապոլի պայմանագրով նախատեսված սահմանները նախորոշված են եղել, բայց դրա ստորագրումը բոլշևիկները ցանկացել են իրականացնել նախկին իշխանության պատվիրակության ձեռքով՝ պատասխանատվությունը գցելով նրա վրա:

8. Հայաստանի տարածքային ու սահմանային խնդիրների լուծման հարցում ՀՀ կառավարությունը ոչ միշտ էր անհրաժեշտ նախաձեռնություններ հանդես բերում և հաճախ հանդես էր գալիս պասսիվ դիտորդի դերում:

9. Հայաստանի կառավարող շրջաններին այդպես էլ չհաջողվեց երկրի ներսում ապահովել կայունություն և անհրաժեշտ չափով հասնել հայության երկու հատվածների միասնականությանը:

10. Հայաստանի Հանրապետության ղեկավարությունն առանձին դեպքերում թերագնահատեց Թուրքիայի քաղաքական ու ռազմական ակնկալիքները և դրան հակառակ գերագնահատեց մեր երկրի նշանակությունը եվրոպական երկրների համար:

11. Ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի տարբեր ուղղությունների ներկայացուցիչներից ձևավորված պատվիրակությունները հաճախ պատշաճ հետևողականություն և անհրաժեշտ դիվանագիտական հմտություններ չեն ցուցաբերել Հայաստանի տարածքներին ու սահմաններին առնչվող բանակցություններում:

12. Հայաստանի Հանրապետության իր տարածքային ու սահմանային խնդիրների լուծման հարցում մեծապես խանգարում էր ինչպես դաշնակից երկրների երկդիմի քաղաքականությունն, այնպես էլ մեր անմիջական հարևանների՝ Վրաստանի ու Ադրբեջանի մեղմ ասած հակահայկական մոտեցումներն ու քայլերը:

13. Քննարկվող ժամանակահատվածում բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը, բացի Սևրի պայմանագրից, կնքվել են միջազգային պայմանագրերի իրավունքի մասին իրավական նորմերի կոպիտ խախտումներով, ուստի չեն կարող օրինական համարվել:

Վերջնական եզրակացությունը հետևյալն է՝ Հայաստանի Հանրապետության կարճատև պատմության ընթացքում կնքված պայմանագրերով ու համաձայնագրերով մատնանշված սահմաններով Հայաստան գոյություն է ունեցել միայն տեսականորեն:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. Հայկական պետականության առարկայացման դիվանագիտական նախաքայլերը Բաթումի դաշնագրից առաջ, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2011, 4(53), էջ 141-148:
2. Բաթումի կոնֆերանսը, Հայաստանի Հանրապետության սահմանների հարցը Բաթումի պայմանագրում «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2012, 2(5), էջ 3-18:
3. Հայաստանի Հանրապետության սահմանները ըստ Սևրի պայմանագրի «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2013, 1(7), էջ 31-37:
4. Հայաստանի տարածքներն ըստ 1920 թվականի դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի, «Մխիթար Գոշ» /գիտական հոդվածներ, Երևան, 2014, 2(41), էջ 145-152:

ТОРОСЯН ДЖАВАИР ДЖАНИБЕКОВНА

Вопрос армянских территорий в конференциях и договорах 1918-1920 гг.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 31-го марта 2015г., в 14⁰⁰, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА, при Институте истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена проблеме армянских территорий, нашедшей свое отражение в документах, соглашениях и договорах 1918-1920гг.

Во **введении** обоснована актуальность изучаемой проблемы, степень ее разработанности, представлены научная новизна и практическое значение исследования.

Первая глава диссертации **«Вопрос армянских территорий во время переговоров в Трапезунде и в Батумском договоре»** состоит из двух подглав. Первая подглава посвящена проблеме армянских территорий, обсуждаемой во время переговоров в Трапезунде, вторая – Батумской конференции и подписанному по ее завершении договору. Анализ документов, освещающих ход переговоров в

Трапезунде, показал, что в них стали прочерчиваться контуры армянского государства.

На большом фактическом материале показано, что на Батумской конференции туркам удалось достичь своей цели: Закавказью были навязаны границы, не предусмотренные Брест-Литовским договором. Батумским договором были очерчены границы между Турцией и тремя Закавказскими республиками, а вопрос границ, разделяющих эти три республики, остался не решенным. Это свидетельствовало о проблематичности определения территорий Армении по этому договору. Кроме того, заключенный 4 июня 1918 г. в Батуми договор был признан армянскими историками позорным, поскольку Армения так и не состоялась в границах, отмеченных во 2-ой статье.

Вторая глава диссертации **«Вопрос границ Республики Армения, по Севрскому договору»** также состоит из двух подглав. Первая посвящена направленности политических взглядов относительно территории и границ Армении до Севрского договора, вторая – вопросам границ Республики Армения, согласно Севрскому договору. В первой подглаве на конкретном фактическом материале показано, что политические течения в Армении имели разноречивые подходы к вопросу о территориальных требованиях. Армянские делегации выдвигали своим союзникам требования о создании государства с обширной территорией, которые не были удовлетворены. Некоторые деятели партии «Дашнакцутюн» выступали с более конкретными и, возможно, более реалистическими требованиями, которые также не были удовлетворены. В заключительной части первой подглавы отмечается, что, к сожалению, армянская политическая элита не была единодушной в этом вопросе и не учитывала реалий.

Во второй подглаве доказано, что в Севрском договоре нет четкого определения границ Республики Армения. Турция и Армения соглашались подчиниться президенту США по арбитражу границ в пределах областей Трапезунд, Эрзрум, Битлис и Ван. В день подписания Севрского договора уже была под сомнением его реализация, исходя из внешних и внутренних обстоятельств.

Третья глава диссертации **«Вопрос армянских территорий в свете отношений Республики Армения с Советской Россией в августе-декабре 1920 года»** состоит из трех подглав. В первой подглаве сделана попытка уточнения границ Республики Армения согласно Тифлисскому соглашению от 10 августа 1920 г. Подписанное в этот день с Россией соглашение ничего не дало Армении даже для установления временного перемирия в Карабахе, Зангезуре и Нахичеване.

Во второй подглаве на основе глубокого и всестороннего анализа фактического материала доказано, что ни одна из так называемых «спорных» территорий, упомянутых в Ереванском соглашении, не стала de facto частью Советской Армении, они были переданы ей лишь формально. Это касалось Нахичевана, Зангезура, Карабаха. Положительное решение вопроса о передаче Армении части территорий Карсской и Тифлисской губерний также было под сомнением, поскольку она была занята турками.

Кроме того, Ереванским соглашением устанавливалось, что в состав Советской Армении должны быть включены часть провинции Казах, в частности Дилижан и Карвансарай, южные территории нейтральной зоны Лори Тифлисской губернии, которые также были заняты турками.

Третья подглава посвящена Александропольской конференции и Александропольскому договору. Этот договор не позволяет определить, какую именно территорию занимает Армения, поскольку:

а) не была уточнена граница между Нахичеваном и Зангезуром;

б) Зангезур был независимой политической единицей и власть находилась в руках Нжде;

в) Александропольская губерния и предоставляемая Армении часть Карсской губернии были захвачены турками (турецкие войска оставили эти территории лишь 22 апреля 1921 г. по настоятельному требованию советских властей);

г) не был решен вопрос принадлежности Нагорного Карабаха;

в) было не ясно, кому должна отойти нейтральная зона Лори.

В **выводах** обобщены основные результаты исследования.

TOROSYAN JAVAHIR JANIBEK

The problems of Armenian territories at the conferences and contracts in 1918-1920

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of “History of Armenia” 07.00.01.

The defence of the dissertation will be held on March 31, 2015, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of RA NAS (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

SUMMARY

The very thesis expounds the problem of the Armenia territories according to the 1918-1920 Congresses, agreements and treaties.

Introduction justifies the studied problem actuality, introducing the theme elaboration level, as well as scientific novelty and the research practical importance.

Part I titled as “ **Issue of Armenian territories at Trapizond negotiations and Batum treaty**” consists of two subparts, the first of which is devoted to elucidating the issue of the Armenian territories at Trapizond negotiations, and the second - to the Batum Congress and signed after it treaty on the RA territories. The analysis of the documents of Trapizond negotiations and diplomatic processes shows that just in them the Armenian Republic was gradually externalized.

Thereafter, the analysis of the available documentary material justifies that at the Batum Congress the Turkish succeeded in dictating the Transcaucasia boundaries which had not been foreseen by the Brest-Litovsk treaty. Then, it is introduced that under the Batum treaty there were specified only the boundaries between three Transcaucasia republics and Turkey, whereas the boundaries between the mentioned three Transcaucasia republics remained uncertain which means that it is difficult to define the Armenia territories under that treaty. Besides, the work emphasizes such fact that Armenia failed in establishing itself with those

boundaries predetermined by item 2 of the Batum treaty signed on June 4, 1918, which was qualified by the Soviet Armenian historiography as a “disgraceful treaty”.

Part II “The boundaries of Armenian Republic specified under the Treaty of Sèvres” also consists of two subparts, the first of which concerns the orientation of political views with regard to the territories and boundaries of Armenia before the Treaty of Sèvres, and the second – the boundaries the problem of due to the Treaty of Sèvres. In the first subpart, based on the explicit factual material it is shown that the political orientations in Armenia had contradictory approaches for the issue on territorial requirements. The Armenian delegations made demands that the allies would have approved the establishment of the state with vast territory which were not met. Some politicians, members of Armenian revolutionary federation “Dashnaksutyun”, spoke with more explicit, maybe more close-to-reality claims but they were not satisfied as well. In the final part of Part I it is mentioned that, unfortunately, the political elite were not unanimous on that issue and did not consider the realities. The second subpart justifies that in the Treaty of Sèvres there is no clear definition of Armenian Republic boundaries. Turkey and Armenia gave their consents to yield to the USA president on boundary arbitration within the territories of Trapizond, Erzurum, Bitlis and Van. Just on the day of the Sèvres Treaty signing its feasibility was already challenged subject to the external and inner circumstances.

The thesis Part III “Issue of Armenian territories in the light of the Armenia Republic and Soviet Russia relationships in August-December, 1920” consists of three subparts. In the first subpart the author tries to specify the boundaries of the Republic of Armenia under the Tiflis agreement of August 10, 1920. The agreement signed on that day with Russia gave nothing to Armenia even from the aspect of concluding a truce in Karabakh, Zangezur and Nakhichevan.

In the second subpart, which is titled **“Armenian territories under Yerevanian agreement of December 2, 1920”**, based on the thorough and comprehensive analysis of the facts brought, it is emphasized that none of the so called “disputable” territories, mentioned in the Yerevanian agreement failed to become de facto the part of the Soviet Armenia, they were surrendered to it just formally. That related to Karabakh, Zangezur and Nakhichevan. The issue of surrendering the parts of the territories of Kars and Tiflis provinces to Armenia also was not real since they were occupied by the Turks.

Besides, under the Yerevanian agreement some part of Ghazakh province should have been surrendered to the Soviet Armenia, partially Dilijan and Karvansaray, including the south territories of Tiflis province of Lori neutral zone which were also occupied by the Turks.

The third subpart **“Alexandropol Congress. Armenia territories under the Alexandropol Treaty”** concerns the Alexandropol Congress and the Treaty signed after it. The latter does not allow defining the area occupied by Armenia, since:

- a) the boundary between Nakhichevan and Zangezur was not specified;
- b) Zangezur was independent political unit under Nzhdeh’s administration
- c) Alexandropol province and the part of Kars province to be surrendered to Armenia were occupied by the Turks (the Turk troops left those territories on April 22, 1921 under the Soviet rulers’ categorical demand).
- d) the status of Naghorni Karabakh was not solved;
- e) it was not clear what country the neutral zone Lori was to be handed over to.

The Conclusion summarizes the basic results of the research.